



«Նոր ժամանակի կրթու թյ ու ն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման
մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման
գործընթացում

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Սահակյան Կարինե

Ուսումնական հաստատություն՝ Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	6
1.1. Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացությունները	7
1.2. Պրոբլեմային ուսուցման հատուկ գծերը.....	12
ԳԼՈՒԽ 2. ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	14
2.1. Պրոբլեմային ուսուցման ֆունկցիաները	15
2.2. Պրոբլեմային իրավիճակների ստեղծման եղանակները	17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	19
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր ՀՊԶ-ի ներդրումն իր հետ բերեց մի շարք փոփոխություններ հանրակրթության ոլորտում, որոնցից ամենակարևորը կարողունակություններով օժտված շրջանավարտ ունենալն է: Վաղուց արդեն ժամանակն է, որ դպրոցն ավարտածը ունենա ոչ միայն գիտելիքներ, որոշ դեպքերում կիրառի նրանցից մի քանիսը, այլ արժևորի դրանք, կողմնորոշվի ըստ իրավիճակի, կիրառի դրանք աշխատանքում և կյանքում: Այս գործընթացում շատ կարևոր քայլ է սովորողների ինքնուրույն մտածողության ձևավորումն ու զարգացումը: Իհարկե, վերոնշյալը միշտ էլ համարվել է ուսուցման գործընթացի կարևոր նպատակը, սակայն ոչ միշտ են ընտրվել այնպիսի մեխանիզմներ, մեթոդներ և մոտեցումներ, որ կապահովեն դրանց ձևավորումն ու զարգացումը: Դեռևս Կ. Դ. Ուշինսկին լուրջ ուշադրություն էր դարձնում աշակերտի ինքնուրույն մտածողության զարգացմանը. «Սովորողի մտքի ինքնուրույնությունը ցանկացած արդյունավետ ուսուցման միակ ամուր հիմքն է»: Այս խնդրի լուծման ճանապարհին մեծ դեր ունի պրոբլեմային ուսուցումը, որի բաղադրամասերն են`

- 1) պրոբլեմային իրավիճակների ստեղծումը և իմացական խնդրի ձևակերպումը,
- 2) սովորողի մոտ ինքնուրույն մտածողության խթանումը, որն ուղղված կլինի իմացական խնդրի լուծմանն ու նոր գիտելիքների ձեռք բերմանը,
- 3) նոր գիտելիքների ընդլայնումը, խորացումն ու ճշտումը:

Ըստ Ս. Ի. Օժեգովի` պրոբլեմը բարդ հարց կամ խնդիր է, որը պահանջում է լուծում, հետազոտում [2]: Սա նշանակում է, որ պրոբլեմային ուսուցումը ոչ թե պատրաստի գիտելիքների վրա հենված կրթությունն է, այլ լուծման, հետազոտման քայլեր առաջադրող գործընթացը: Եթե աշակերտն ունի այս կամ այն հարցի պատրաստի պատասխանը, ապա ունեցած գիտելիքները հիշելուց և վերարտադրելուց բացի նրանից մտածողության ջանքեր չեն պահանջվում: Իմացական պրոբլեմը աշակերտին դուրս է բերում իր ունեցած գիտելիքների շրջանակից և փոխադրում դեռևս անհայտ, որոնում պահանջող մտածողական գործունեության ոլորտ: Այսպիսով, կարևոր է ուսումնական գործընթացում իմացական խնդրի առկայությունը: Սակայն այն պրոբլեմային իրավիճակի բնութագրիչներից միայն մեկն է, որովհետև դժվար չէ սովորողին դուրս բերել իր ունեցած գիտելիքների շրջանակներից, սակայն նրա մտածողությունը կարող է մնալ չընդգրկված` «չմիացած»: Սովորողի իմացական գործունեությունը «միացնելու» և այն խնդրի լուծմանը նպատակաուղղելու համար նրանում պետք է ինչ-որ բան հայտնի լինի, այսինքն պետք է տրվեն նաև մտածողությունը ուղղորդող տվյալներ: Պրոբլեմային իրավիճակը պետք է ունենա նաև

հոգեբանական էլեմենտ. փաստերը պետք է լինեն նոր և տպավորիչ, իսկ իմացական խնդիրը՝ անսովոր, արտառոց, հետաքրքրագրգիռ, այն պետք է հետաքրքրի սովորողին և նրա մեջ առաջացնի իմացական որոնման ձգտում:

Ցանկացած ուսումնական գործընթացի ժամանակ պարապմունքները պլանավորելիս ու կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները: Օրինակ, 5-7-րդ դասարանցիներին բնորոշ է վառ հետաքրքրասիրությունը, կենդանի օբյեկտների հետ շփվելու ցանկությունը, դիտողականությունը, որոշակի հմտությունների և կարողությունների արագ

տիրապետումը, հուզականությունը, մասնավորապես երևակայությունը: 8-10-րդ դասարանների աշակերտներին բնորոշ է ամեն ինչ հասկանալու, իմացածը համակարգելու, ընդհանրացնելու ձգտումը, ինքնուրույն սովորելու եղանակների նախընտրությունը, իրենց համար կարևոր առարկաների ընտրությունը [4]:

Դասերին կիրառվող մեթոդները բազմազան են՝ զննումը, փորձը, լաբորատորիայի պրակտիկ աշխատանքը, տրամաբանական խնդիրների լուծումը, տեսաֆիլմերի, աղյուսակների և նկարների դիտումը, սովորողների զեկուլցներն ու ռեֆերատների շարադրումը, գիտահետազոտական աշխատանքներին մասնակցությունը և այլն: Այսօր առավել ևս դասն արդիական է դարձել՝ ուսումնատեխնիկական միջոցների շնորհիվ աշակերտներն ինքնուրույն աշխատանքի հնարավորություն են ստացել: Համակարգչի միջոցով համացանց մտնելու հնարավորությունն օգտագործելու դեպքում ուսուցիչն աշակերտին տալիս է նոր գիտելիքներ ձեռք բերելու, տեղեկատվությունը սեփական, ինքնուրույն մտավոր գործունեության ճանապարհով ցուցադրելու և կիրառելու առիթ: Ուսումնական նյութի բովանդակությամբ և սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված առաջարկվում են պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ:

Կիրառվում է նաև պրոբլեմային ուսուցման այնպիսի մոտեցում, երբ պահանջվում է ուսուցանվող նյութի մեջ գտնել և ինքնուրույն ձևակերպել իմացական պրոբլեմը: Պրոբլեմային իրավիճակների կիրառումը սովորողի համար հանգեցնում է կանխատեսված դժվարությունների, որոնց հաղթահարումը պահանջում է ստեղծագործական որոնում, ստիպում է սովորողին մտածել, ելք փնտրել, քննարկել և խնդրի լուծումից հաճույք զգալ, որն էլ նպաստում է տվյալ առարկայի հանդեպ ակտիվ իմացական հետաքրքրությունների զարգացմանը: Սակայն պրոբլեմային ուսուցման կիրառությունը ցանկալի չէ նկարագրական բնույթի նյութի մատուցման դեպքում: Երբեմն տեղեկատվության եղանակով նյութը կարելի է ավելի արագ հաղորդել քան դա կարելի է անել պրոբլեմային եղանակով: Մեր փորձը ցույց է տալիս, որ տարաբնույթ խնդիրների առաջադրումը ևս բարենպաստ հուզական ֆոն է ապահովում՝ սովորողների ինքնուրույն մտածողության զարգացման առումով: Խնդիրները նպաստում են սովորողների մտքի ակտիվացմանը, տրամաբանության և իմացական հետաքրքրությունների զարգացմանը: Խնդրի ինքնուրույն լուծումը սովորողի համար դառնում է մի փոքրիկ հայտնագործություն, այն ուղեկցվում է բավարարվածությամբ և դրական հույզերով, այն հետաքրքիր է և չձանձրացնող: Խնդիր լուծող աշակերտը դառնում է ավելի ինքնավստահ: Այսպիսով, խնդիրների միջոցով կարելի է որոշել, թե ի՞նչ հաջողությամբ է սովորողն օգտագործում իր գիտելիքները:

Սույն աշխատանքի նպատակն է դիտարկել պրոբլեմային ուսուցումը, դրա առավելությունները, օգտագործման ձևերը, հնարները, պատկերացում տալ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիաների համակարգի մասին, ներկայացնել նրանց հնարավորությունները ուսուցման գործընթացում՝ նպաստելով ակտիվ ուսուցման ձևերի ներմուծմանը ուսուցման գործընթաց, մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում:

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- վերլուծել պրոբլեմային ուսուցման կարևորությունը կրթական համակարգում,
- բացահայտել պրոբլեմային ուսուցման փոփոխությունները ուսուցման գործընթացում,
- ուսումնասիրել և ներկայացնել պրոբլեմային ուսուցման լայն ընդգրկումն ու բազմակողմանի եռությունը,

ԳԼՈՒԽ 1.

ՊՐՈՒԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հասարակական կյանքում տեղի ունեցող վերափոխումները նպաստում են հանրակրթության դերի աճին և դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի արմատական բարեփոխումներին, որոնք ժամանակի պահանջ են դարձել: Հանրակրթական էական բարեփոխումները և առաջանցիկ զարգացումը դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի: Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում [2]: Ժամանակակից դպրոցի առաջ դրված խնդիրների լուծումը պահանջում է սովորողների կողմից ինքնուրույն աշխատանքի կատարում: Այն սովորողների զարգացման, համոզմունքների ձևավորման, նրանց պրակտիկ գործունեության համար պատրաստելու անհրաժեշտ միջոցն է: Իրատեսական կրթակարգը սովորողներին ներգրավում է այնպիսի գործողությունների մեջ, որոնք նպաստում են նրանց ինքնաճանաչողության և աշխարհընկալման խորացմանը: Նկատի ունենալով աշակերտների դեռևս չձևավորված կարողությունները՝ նրանց պետք է հնարավորություն ընձեռնել մասնակցելու կրթակարգի նպատակների իրականացման պրոցեսին, ուսումնական գործունեության ընտրությանը և դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը: Փորձենք համեմատական անցկացնել դասավանդման պրոցեսում ավանդական և նոր մեթոդների միջև: Ուսուցման մեթոդները պայմանականորեն կազմում են 2 խումբ՝

1. ավանդական – այն մեթոդներն են, որոնց հիմքում ընկած է պատրաստի գիտելիքների պարզ փոխանցումը սովորողներին և նրանց կողմից ինֆորմացիայի պարզ վերարտադրումը: Այս պարագայում սովորողն ուսուցչի հրահանգների պասիվ կրողն է,

2. նոր կամ ժամանակակից մեթոդ – հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, նրա ակտիվ և անմիջական մասնակցությունը գիտելիքների ձեռքբերման գործընթացում:

Կրթադաստիարակչական պրոցեսում առանձին տեղ է գրավում ժամանակակից մեթոդների կիրառումը, որոնք հնարավորություն են ընձեռնում աշակերտ-ուսուցիչ կապի լիարժեք հաստատմանը սովորողի գիտելիքների բացահայտման ու ամրապնդման գործընթացում [3]:

Կիրառվող մեթոդներից արդյունավետ է և առավել հաճախակի է օգտագործվում պրոբլեմային ուսուցումը: Նշված մեթոդի էությունը պրոբլեմային ուսուցման ստեղծումն է, որը նպաստում է աշակերտների մտածողության մակարդակի բարձրացմանը:

Այն ընձեռում է ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, անհայտը որոնելու, ունեցած գիտելիքները փորձարկելու, վարկածներ առաջադրելու, գործողության նոր եղանակ հայտնաբերելու, պրոբլեմը լուծելու, վերջնական նպատակին հասնելու հնարավորություն: Ուսուցման այս ձևը ունի առավելություններ, քանի որ այն զարգացնում է սովորողների տրամաբանությունը, ուսումնական նյութը դարձնում է ապացուցելի, հնարավոր է դարձնում օգտագործել աշակերտների եղած բոլոր գիտելիքները, բնականաբար կապում է այլ առարկաների հետ՝ ուսումնական պրոցեսը դարձնելով ավելի հետաքրքիր: Ցանկանում ենք նշել, որ պրոբլեմային ուսուցման մեթոդով ձեռք բերվածը ավելի երկար է մտապահվում: Պրոբլեմային հարցը այն է, որն առաջացնում է իմացական դժվարություն: Եթե հարցի պատասխանը չի պարունակում նոր գիտելիքներ կամ որոնելի անհայտ, ապա այդպիսի հարցը պրոբլեմային չէ [4]:

1.1. Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացությունները

Պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացություններից են՝ ուսումնական պրոբլեմը (կամ ուղղակի պրոբլեմային խնդիրը), պրոբլեմային հարցը և պրոբլեմային իրավիճակը: Ուսուցման գործընթացում պրոբլեմային խնդիրը իրագործում է որոնելի անհայտի բացահայտման ֆունկցիա: Սովորական խնդիրը և պրոբլեմային խնդիրը տարբեր հասկացություններ են: Պրոբլեմային խնդիրը ներառում է ենթապրոբլեմներ, պրոբլեմային հարցեր, առաջացնում շղթայական իրավիճակներ: Մինչդեռ սովորական խնդիրը զուրկ է այդպիսի հատկություններից: Պրոբլեմային խնդիր հասկացությունը կարելի է ձևակերպել այսպես. պրոբլեմային խնդիրը որոնելիս անհայտից բխող ենթապրոբլեմների և պրոբլեմային հարցերի համակցություն է, դրանց ամբողջականությունը կամ միագումարությունը, որ առաջացնում է պրոբլեմային իրավիճակներ: Հոգեբանները գտնում են, որ մարդը սկսում է մտորել, երբ որ անհրաժեշտ է ինչ-որ բան հասկանալ: Այդ իրավիճակին կարելի է աշակերտին հասցնել դասի սկզբին՝ հասկացնելով նրան, որ իր ունեցած գիտելիքները բավարար չեն բացատրելու ուսուցչի կողմից բերված իրավիճակները: Ուսուցչի կողմից հատուկ կազմակերպված ինտելեկտուալ բարդությունները, որոնք աշակերտին ստիպում են լրացուցիչ գիտելիքներ ձեռք բերել, ներկայացնում են պրոբլեմատիկ իրավիճակ: Պրոբլեմային իրավիճակ նշանակում է մարդու գործունեության ընթացքում ի հայտ եկող անբացատրելի և անհասկանալի: Եթե պրոբլեմային իրավիճակի հետազոտությունների ընթացքում մարդը հասկանում է այն պատճառը, որը առաջ է քաշել դժվարությունները, և որոշում է կայացնում իր ունեցած գիտելիքների հիման վրա, ապա պրոբլեմային իրավիճակը դադարում է պրոբլեմ լինելուց: Պետք է նկատի

ունենալ, որ յուրաքանչյուր պրոբլեմատիկ իրավիճակվերածվում է պրոբլեմի: Պրոբլեմի և նրա ձևակերպման բացահայտումը մտավորունակության առաջին փուլն է: Պրոբլեմային մտահաղացումն այն է, երբ ուսուցիչը, ստեղծելով պրոբլեմային իրավիճակը, շարադրում է նյութը՝ բարձրաձայն քննարկելով, արտահայտելով տեսակետներ, քննարկելով դրանք, հերքելով հնարավոր անհամաձայնություններ, ապացուցելով ճշմարտությունը փորձերի միջոցով: Ուսուցիչը աշակերտներին փորձարկումների միջոցով ներկայացնում է գիտական ուսումնասիրման ճանապարհը: Աշակերտները հետևում են մտահաղացմանը և նրանց մոտ հարցեր են առաջանում: Ընկալելով մտահաղացման պատկերը՝ աշակերտները տեղափոխում են այն մի այլ իրավիճակ, որի հետ կարող են հետագայում բախվել: Զրույցի ընթացքում ուսուցիչը աշակերտների առջև դնում է պրոբլեմային խնդիր և դրան հետևող մի շարք համակցված հարցեր, որոնց պատասխանները տանում են դեպի խնդրի լուծմանը»: Մասնակի որոնողական մեթոդներում աշակերտները իրենց առջև դրված պրոբլեմային խնդիրը լուծում են ինքնուրույն, բայց ուսուցիչը նրանց օգնություն է ցուցաբերում՝ տալով նրանց գործունեության պլան, հուշելով առանձին քայլեր դժվարությունների հանդիպելիս: Ընդ որում՝ աշակերտի մտավոր որոնողական գործունեության համակարգում ավելանում են գիտելիքներ, որոնք պատրաստի ձևով ստանում են ուսուցչի մտահաղացումներից, դասագրքերից, թեստերից և այլն: Ընդգծենք պրոբլեմային ուսուցման դրական որակները.

1. պրոբլեմային ուսուցումը իրենից ներկայացնում է շատ էֆեկտիվ միջոց, որը բարձրացնում է աշակերտի ուսումնասիրման ակտիվությունը: Գիտելիքները, որոնք ձեռք են բերվել ինքնուրույն, «երկար ժամանակ դառնում են մարդու սեփականությունը»:

2. Պրոբլեմային ուսուցումը նպաստում է մտքի զարգացմանը: Մարդու խելքը հղկվում է մտավոր գործունեության ընթացքում: Մտորումը սկսվում է ոչ միայն պրոբլեմից, այլ նաև հետագայում ձգվում է խնդրի առաջացման, դրա լուծման մի շարք ձևերով: Հոգեբանների պնդմամբ՝ ինտելեկտուալ զարգացումը իրականացվում է՝ միայն հաղթահարելով որոշակի բարդություններ կամ ինտելեկտուալ դժվարություններ: Այսպիսով, պրոբլեմատիկ մոտեցումը ուսման մեջ ներկայացվում է որպես աշակերտների ակտիվության հիմնական միջոց [1]:

Պրոբլեմային ուսուցումը պարտադիր որակ է ժամանակակից դասավանդման մեջ: Դա աշակերտի մտավոր ունակության զարգացումն է: Պետք է նաև ընդգծել որոշ սահմանափակումներ այս ուսուցման մեջ.

1. խնդրի բոլոր լուծումների որոշումները ժամանակի մեծ ծախս են պահանջվում, դասաժամը կարող է չբավականացնել:

2. Շատ հիմնավորված հասկացություններ և օրինաչափություններ աշակերտը ունակ չէ ինքնուրույն բացահայտել:

3. Ուղղելով ուշադրությունը խնդրի լուծման առանձին փուլերի վրա, նոր ենթադրությունների ապացուցմանը՝ աշակերտը հաճախ կորցնում է ամբողջության պատկերացումը, չի կարողանում հաջորդաբար վերարտադրել եզրակացությունը:

4. Աշակերտների մեծամասնությունը չի դիմանում երկարատև մտավոր աշխատանքին:

5. Դպրոցականները առաջ են քաշում ինչպես ճշգրիտ, այնպես էլ սխալ առաջարկություններ: Ընդ որում՝ սեփական սխալ մտքերը «հաճախ ամրապնդված և հիշվող են, քան ուսուցչի առաջադրած ճիշտ մտքերը: Մի քանի դասաժամ հետո աշակերտը արտաբերում է իր սխալ մտորումները, մոռանալով ուսուցչի ուղղումները, այդ պատճառով աշակերտի մտքում ճիշտ տեղեկությունը հիմնավորելու համար պետք է հաճախ անդրադառնալ տվյալ սխալին» [5]:

Մեծ է պրոբլեմային ուսուցման դերը աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացման, մտածողության ձևավորման և զարգացման գործընթացներում:

Դասավանդման ընթացքում ուսումնական նյութի մատուցումը պրոբլեմային ուսուցման մեթոդի կիրառման միջոցով բավականին կարևոր և առաջնահերթ խնդիր է, քանի որ այդ մեթոդով նյութի մատուցումը նպաստում է ոչ միայն աշակերտների ճանաչողական հետաքրքրության զարգացմանը, այլև մտածողության զարգացմանը, օգնում է որոշակի տրամաբանական կապ հաստատելու նախկինում անցած թեմաների և նոր դասավանդվող ուսումնական նյութի միջև: Պրոբլեմային ուսուցումը շատ արդյունավետ միջոց է սովորողների ճանաչողական ակտիվության խթանման, տրամաբանական մտածողության զարգացման տեսակետից: Այս ճանապարհով աշակերտների ձեռք բերած գիտելիքները խորն են, գիտակցված ու տևական, իսկ առաջացրած հետաքրքրասիրությունը շարժառիթ է հետագա ճանաչողական գործունեության ակտիվացման համար: Պրոբլեմային ուսուցումը զարգացնում է տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, քանի որ դա կարող է ձևավորվել միայն դժվարություններ, խոչընդոտներ հաղթահարելու ճանապարհով: Փորձը ցույց է տալիս, որ եթե աշակերտն ինքն է հասնում իրեն առաջադրված պրոբլեմի վերջակետին, ապա ձեռք բերած գիտելիքը նա կարողանում է ավելի երկարատև հիշել: Հավանաբար դրա պատճառն այն է, որ աշակերտը համակարգում է իր ունեցած գիտելիքները, դրանց միջից հանում է այն հիմնականն ու կարևորը, որը տվյալ պահին իր համար առաջնայինն է, և տանում է դեպի պրոբլեմի լուծման:

Պրոբլեմային ուսուցման մեթոդը ժամանակակից դիդակտիկայում ուսուցման առաջավոր մեթոդներից մեկն է, քանի որ, ինչպես նշում է ժամանակակից հայ մանկավարժ Յու. Ա. Ամիրջանյանը, այն ներառում է մանկավարժական բազմաթիվ

արժեքավոր մեթոդների ու հնարների օգտագործման հնարավորություններ, ենթադրում սովորողների ինքնուրույն մտածողության զարգացման լայն հեռանկարներ: Այդ մասին են վկայում պրոբլեմային ուսուցման հարցերին նվիրված Ն. Գ. Դայրիի, Ա. Ն. Լեոնտևի, Ի. Յա. Լերների, Ա. Մ. Մատյուշկինի, Յու. Ա. Ամիրջանյանի և ուրիշների հետազոտությունները:

Պրոբլեմային ուսուցման եղությունը, ինչպես իրավացիորեն նշում է Յու. Ա. Ամիրջանյանը, պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է: Այն պահին, երբ մասնակի որոնողական՝ Էվրիստիկ գրուպի մեթոդը, առաջացնելով սովորողների զարմանքն ու տարակուսանքը, ավարտում է իր «առաքելությունը», այդ պահին առաջանում է մի իրավիճակ, որն ընդունված է անվանել պրոբլեմային:

Էվրիստիկ գրուպը արդիականացնում է սովորողների գիտելիքները, կատարում իր դերը՝ մեծացնելով նրանց հետաքրքրությունը տվյալ թեմայի նկատմամբ առաջացնելով անդունդ իմացածի և չիմացածի միջև ու, որ ամենակարևորն է՝ զարմանք: Ոչ մի առաջընթաց, հայտնագործություն առանց զարմանքի տեղի չի ունենում: Կարճ ասած՝ վերոհիշյալ օրինակում մեծ փոխադրում, գրուպելով աշակերտների հետ, «քարը գցում էր փոսը»՝ ավարտելով այդ կերպ Էվրիստիկ մեթոդի առաքելությունը, որից հետո գործելու իրավունքը՝ էստաֆետը, փոխանցվում է մի այլ արդյունավետ մեթոդի, որը մանկավարժական գրականության մեջ կոչվում է պրոբլեմային ուսուցման մեթոդ:

Ըստ Յու. Ա. Ամիրջանյանի՝ զանազանվում են պրոբլեմային ուսուցման պրոբլեմային շարադրանքի, խթանող, մասնակի որոնողական կամ Էվրիստիկական և հետազոտական առաջատար մեթոդներ և դրանց օժանդակող մեթոդներ՝ բացատրացուցադրական, վերարտադրողական, ծրագրավորված և այլն:

Չնայած պրոբլեմային ուսուցման մեթոդի գաղափարն իր ժամանակին արծարծվել է դեռևս Ժ. Ժ. Ռուսոյի կողմից, այնուամենայնիվ դրա գիտական մշակումը կատարվել է միայն 20-րդ դարի 60-ական թվականներից սկսած: Այդ տարիներին զուգահեռաբար ընթանում էին ուսուցման մի այլ արդյունավետ տեխնոլոգիայի՝ ծրագրավորված ուսուցման մեթոդական մշակման աշխատանքները:

Եվ եթե «ծրագրավորված ուսուցման հիմքում ընկած է ալգորիթմական, տրամաբանական մտածողության տեսակը, ապա պրոբլեմային ուսուցումը հիմնականում հենվում է ստեղծագործական, Էվրիստիկ մտածողության վրա», - նշում է հայտնի մեթոդիստ Ն. Վ. Մետելսկին իր «Մաթեմատիկայի դիդակտիկա» ձեռնարկում: Հենց այդպիսի մտածողություն է պետք կիրառել ոչ ստանդարտ մաթեմատիկական խնդիրներ լուծելիս: Բացի դրանից՝ պրոբլեմային ուսուցումը շատ արդյունավետ է նաև մաթեմատիկական տեսությունների ուսումնասիրման ժամանակ, քանի որ այդկերպ սովորողները ծանոթանում են նաև մաթեմատիկական գործունեությանը: Այստեղից

հետևություն, որ «պրոբլեմային ուսուցումը հեռանկարում պետք է դառնա միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցման հիմնական մեթոդներից մեկը», - նշում է Ն. Վ. Մետելսկին:

Պրոբլեմային ուսուցման տեսության մշակմամբ զբաղվել են լեհ պրոֆեսոր Վ.Օկոնը, Ա. Մատյուշկինը, Ի. Յա. Լերները, Մ. Ն. Սկատկինը և ուրիշներ: Այդ տեսության կարևորագույն գաղափարները ուսումնական պրոբլեմի և պրոբլեմային իրավիճակի գաղափարներն են: Վերջինս բնութագրվում է որպես օբյեկտի և սուբյեկտի միջև մտավոր փոխազդեցության հատուկ տեսակ, որը ճանաչողական պահանջմունքներ է առաջացնում սուբյեկտի մոտ՝ մղելով նրան ձեռք բերել (բացահայտել կամ յուրացնել) նոր գիտելիքներ կամ գործունեության տեսակներ: Առանձնապես կարևոր է նշել, որ ճանաչման ենթակա օբյեկտը չնայած պետք է մշտապես գտնվի սուբյեկտի մտավոր կարողությունների սահմաններում, սակայն միաժամանակ առաջացնի որոշակի ինտելեկտուալ դժվարության հոգեվիճակ:

Ուսումնական մաթեմատիկական խնդիրը (հարցը) կարող է առաջացնել պրոբլեմային իրավիճակ հետևյալ երկու դեպքերում.

ա) եթե նրա պայմանի և պահանջի հարաբերակցության մեջ մասնակցում է մտածողության սուբյեկտը՝ մարդը,

2) եթե այդ մարդը նաև չգիտի, թե ինչպես լուծի տրված խնդիրը:

Բոլոր դեպքերում ցանկացած դժվարության խնդիրը կարող է առաջացնել պրոբլեմային իրավիճակ բոլոր նրանց համար, ովքեր դեռևս չգիտեն, թե ինչպես լուծեն այն: Սակայն այդ նույն խնդիրը չի կարող պրոբլեմային լինել նրանց համար, ովքեր գիտեն լուծել այն: Նույնիսկ անցած, բայց արդեն մոռացված նյութի վերարտադրության վերաբերյալ հարցը կարող է դառնալ պրոբլեմահարուց բոլոր նրանց համար, ովքեր ցանկություն են հայտնում դատողությունների միջոցով վերականգնելու հարցի ճիշտ պատասխանը, որն արդեն իրենց համար կարծես թե դառնում է նոր գիտելիք:

1.2. Պրոբլեմային ուսուցման հատուկ գծերը

Ընդհանրապես պրոբլեմ ասելով՝ հասկացվում է խնդիր, որը ենթակա է լուծման, հետազոտման: Իր հերթին ուսումնական պրոբլեմի լուծման համար անհրաժեշտ են գիտությանն ու մարդկությանը հայտնի, բայց լուծողին՝ անհատին (աշակերտին) դեռևս անհայտ նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ: Ուսումնական պրոբլեմը պրոբլեմային իրավիճակի այն բաղկացուցիչ տարրն է, որը առաջացրել է որոշակի դժվարություններ, տարակուսանք ու զարմանք, և որն էլ հենց սահմանվում, որոշակիացվում է պրոբլեմային իրավիճակի վերլուծության ընթացքում: Այստեղ ամենակարևորը պրոբլեմի արձանագրումն է, որի համար նախևառաջ անհրաժեշտ է

ձևակերպել՝ որոշակիացնել առաջացած դժվարության բնույթը: Ընդհանրապես պրոբլեմ դնելը (արձանագրելը) մեթոդաբանությունում համարվում է ստեղծագործական մտածողության առաջին փուլը: Հաճախ հենց այս փուլում էլ ծնվում է ուսումնական պրոբլեմի լուծման մասին առաջին վարկածը: Ակադեմիկոս Ն. Ն. Լուզինը գիտության ոլորտում նշված իրողությունը նկարագրում է հետևյալ կերպ. «Սովորաբար պրոբլեմի դրվածքից պարզ է դառնում նրա լուծման ուղու ընտրությունը, սակայն եթե պրոբլեմի դրվածքում նրա լուծման ուղու մասին որևէ ցուցում չի պարունակվում, ապա այդ պրոբլեմը թվում է անհուսալի և կարող է տասնյակ տարիներ սպասել իր լուծմանը»:

Ցավոք, հեղինակների մոտ «պրոբլեմային ուսուցում» հասկացության մասին միասնական կարծիք գոյություն չունի: Վ. Օկոնը առանձնացնում է պրոբլեմային ուսուցման երեք հիմնական փուլ՝

- 1) պրոբլեմի արձանագրում,
- 2) պրոբլեմի լուծում,
- 3) լուծման ստուգում:

Պրոբլեմային ուսուցման մասին հնարավորինս լայն մեկնաբանություն կա Մ. Ի. Մախմուտովի «Պրոբլեմային ուսուցման տեսություն և պրակտիկա» (Կազան, 1972) մենագրությունում, որում հեղինակը առանձնացնում է պրոբլեմային ուսուցում կազմակերպելու վեց դիդակտիկական եղանակներ: Իսկ Մ. Ն. Սկատկինը առանձնացնում է պրոբլեմային ուսուցման երեք տեսակներ՝

- 1) գիտելիքների պրոբլեմային մատուցում,
- 2) պրոբլեմային մատուցման տարբեր փուլերում սովորողների մասնակցություն որոնողական աշխատանքներին,
- 3) ուսուցման հետազոտական մեթոդ:

«Պրոբլեմային ուսուցման» մեթոդները ենթադրում են դասավանդողի կողմից պրոբլեմի առաջադրում, ձևակերպում, լուծում՝ սովորողներին ցույց տալով դրանց լուծման ուղիները: Այս մեթոդի եռությունը կամ նշանակությունը այն է, որ դասավանդողը ցուցադրում է գիտական ճանաչողության, պրոբլեմի լուծման նմուշները: Կարելի է առանձնացնել պրոբլեմային ուսուցման մեթոդների երկու տարատեսակ՝

1. դասավանդողի կողմից գիտելիքների պրոբլեմային շարադրման մեթոդ,
2. սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպման մեթոդ:

ԳԼՈՒԽ 2.

ՊՐՈՔԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՈՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնական գործընթացի զարգացման, կատարելագործման ուղիների որոնումը հանգեցնում է մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների մշակման, որոնց շարքում է նաև պրոբլեմային ուսուցումը, այսինքն՝ ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպումը, որը սովորողին ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, չիմացածն ու անհայտը որոնելու, խնդիրը լուծելու և վերջնական նպատակին հասնելու հնարավորություն է ընձեռում: Նշված տեխնոլոգիայի էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որը նպաստում է ուսանողների մտածողության մակարդակի բարձրացմանը: Մերօրյա տեղեկատվական դարաշրջանում սովորողները ամրապնդման ենթակա նյութի ծավալների աճին զուգահեռ հաճախ ոչ թե ամրապնդում, այլ պարզապես մտապահում են յուրացման համար նախատեսված նյութերը, այն էլ՝ շատ կարճ ժամանակով և միայն դասահարցմանը կամ քննությանը պատրաստ լինելու համար: Բուհական դասընթացում թեմային հատկացված ժամանակահատվածի սահմանափակությունը, ուսանողների թիվը հնարավորություն չեն տալիս դասախոսին պարզելու՝ արդյո՞ք թեման յուրացվել է յուրաքանչյուր սովորողի կողմից, հարցման ենթարկված ուսանողը իրականում ամրապնդե՞լ է թեման, թե՞ պարզապես կարողանում է վերարտադրել մտապահածը: Բացի դրանից՝ լսարանային պայմաններում նույն թեման միևնույն ժամանակահատվածում և միևնույն մեթոդներով, ընդհանուր կամ միևնույն ուսումնական ծրագրերով ուսումնական խմբի յուրաքանչյուր սովորողի կողմից չի կարող յուրացվել նույն աստիճանով, քանի որ տարբեր ուսանողներ ունեն տարբեր ընդունակություններ: Ուստի դասախոսները հաջորդ նյութին անցնելուց առաջ բավարարվում են սովորողների կողմից տվյալ թեմայի յուրացման աստիճանի գնահատմամբ: Նմանօրինակ խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ են առաջարկում ուսուցման նորարարական բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնցից մեկն էլ պրոբլեմային ուսուցումն է: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան մշակել է Ջ. Դյուկին: «Ինչպե՞ս ենք մենք մտածում» աշխատության մեջ (1909) ամերիկացի փիլիսոփա, հոգեբան ուսուցիչը մերժում է ավանդական դոգմատիկ ուսմունքը՝ դրան հակադրելով խնդիրների լուծման գործում ուսանողների ակտիվ և անկախ պրակտիկ գործունեությունը: «Մտածմունքն սկսվում է այնտեղ, որտեղ առկա է խնդրահարույց

իրավիճակ, և դա խնդիրների լուծումն է»,– ասում է Դյուլին: Նրա այս բանաձևը XX դարում ձևավորեց պրոբլեմային ուսուցման հիմքը [6, էջ 68]:

2.1. Պրոբլեմային ուսուցման ֆունկցիաները

Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման մեջ էական դեր է խաղացել ամերիկացի հոգեբան Ջ. Բրուների հայեցակարգը, որը հիմնված է ուսուցման նյութի կառուցվածքի և նոր գիտելիքների յուրացման գործընթացում ինտուիտիվ մտածողության գերիշխող դերի վրա: Ճանաչելով տրամաբանական մտածողության զարգացումը որպես ուսուցման նպատակ՝ Ջ. Դյուլին, Ջ. Բրուները, Վ. Բարթոնը նշում են ուսուցման մեջ խնդրահարույց մոտեցման կարևորությունը [7, էջ 35, 9, էջ 16-18]: Ինչպես ուսուցման մյուս տեխնոլոգիաները, պրոբլեմային ուսուցումը ևս նպատակաուղղված է կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը, որն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսուցման գործընթացի կազմակերպման նորարարական միջոցների օգնությամբ: Պրոբլեմային ուսուցումը կատարում է զարգացնող և դաստիարակչական ֆունկցիաներ:

Չարգացնող ֆունկցիաները բազմազան են: Այսպես, օրինակ, մոդելավորվում է աշակերտների մտածողությունը, բարձրացնում նրա արդյունավետությունը: Ուսումնական առարկաների տրամաբանությունը մոտեցնում է գիտությունների տրամաբանությանը, իսկ ուսուցման տրամաբանությունը՝ ճանաչողական տրամաբանությանը: Կազմակերպում է սովորողների խմբային մտավոր աշխատանքը, ապահովում է նրանց մտածողության դիալեկտիկական զարգացումը, իրացնում է գիտելիքների փոխանցումը նոր իրավիճակներում:

Պրոբլեմային ուսուցումը ունի հատուկ դաստիարակչական ֆունկցիաներ: Դրանցից են՝ սովորողների ստեղծագործական հմտությունների դաստիարակումը, ձեռք բերած գիտելիքների ստեղծագործաբար օգտագործումը, ստղծագործական փորձի կուտակումը և այլն:

Պրոբլեմային ուսուցումն օգնում է աշակերտին դառնալ անկախ և ինքնուրույն սովորողներ:

Ուսուցման ժամանակակից մեթոդները նոր պահանջներ են առաջադրում ուսուցման գործընթացում: Պրոբլեմային ուսուցման միջոցով հնարավոր է ոչ միայն արդյունավետորեն իրականացնել տեսական նյութի ուսուցումը, այլև սովորողի մոտ ստեղծել ինքնազարգացման հմտություններ: Այդ ամբողջ գործընթացը հիմնված է առաջնային՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման և երկրորդային՝ երկարաժամկետ անհատական կարողությունների զարգացման արդյունքների գիտակցված ընտրության վրա: Հետևաբար պրոբլեմային

տեխնոլոգիայով իրականացվող դասերի արդյունավետությունը շատ ավելի բարձր կլինի, եթե սովորողը կարողանա ինքնուրույն տիրապետել գիտելիքներին, և մանկավարժը լուրջ դեկավարի այդ գործընթացը վերահսկմամբ [8, էջ 54]: Ներկայումս լայնորեն կիրառվող առցանց և խառը կամ հիբրիդային եղանակով ուսուցման դեպքում ևս պրոբլեմային ուսուցումը նյութի բազմաշերտ ընկալման հրաշալի հնարավորություններ է ընձեռում: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան հիմնվում է հետևյալ գաղափարի վրա. պրոբլեմային իրավիճակների կիրառումը սովորողին կանգեցնում է կանխատեսված դժվարությունների առաջ, որոնց հաղթահարումը պահանջում է ստեղծագործական որոնում և ստիպում է սովորողին մտածել, որոնել, քննարկել, ինչն էլ նպաստում է նրա իմացական հետաքրքրությունների զարգացմանը: Ուսանողը պետք է ինքնուրույն որոնի խնդրի լուծումը, իսկ դասախոսը պարտավոր է ղեկավարել նրա ուսուցման գործընթացը՝ մոտիվացնելով, կազմակերպելով, համակարգելով, ուղղորդելով և վերահսկելով: Պրոբլեմային ուսուցումը հնարավորություն է ընձեռում, որ սովորողի մոտ ձևավորվեն ինքնակրթության հմտություն, նպատակադրման կարողություն, ձևավորվեն և զարգանան համագործակցային այնպիսի օգտակար հմտություններ, ինչպիսիք են՝ ինքնագնահատումը, ինքնավերահսկումը, փոխադարձ վերահսկումը: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ապահովում է նաև ուսուցման անհատականացում՝ ըստ ուսուցման բովանդակության, յուրացման արագության, ինքնուրույնության մակարդակի, վերահսկման եղանակների: Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Գ. Կ. Սելևկոն իր «Ուսուցման տեխնոլոգիաների հանրագիտարան» աշխատության մեջ անդրադարձել է պրոբլեմային ուսուցման առանձնահատկություններին՝ այն դիտարկելով որպես ուսուցման ակտիվ տեխնոլոգիա [10, էջ 195]: Հեղինակը մանրամասնորեն վերլուծում է տարբեր մանկավարժների տեսակետները պրոբլեմային ուսուցման վերաբերյալ: Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման գործում մեծ ներդրում են ունեցել Մ. Ի. Մախմուտովը, Ա. Մ. Մատյուշկինը, Ա. Վ. Բրուշլինսկին, Տ. Վ. Կուդրյավցևը, Ի. Յա. Լերները, Ի. Ա. Իլինցկայան, Ս. Ա. Ռուբինշտեյնը, Լ. Ս. Վիգոսկին, Ա. Ն. Լեոնտևը: «Պրոբլեմային ուսուցում. անցյալը, ներկան, ապագան» կոլեկտիվ մենագրությունում մանրամասնորեն ներկայացվում է ուսուցման նշված տեխնոլոգիայի զարգացման ողջ ընթացքը [9]: Է. Չավարյանն ընդգծել է տարբեր առարկաների ուսուցման ժամանակ խնդրահարույց իրավիճակների ստեղծման մեթոդների և խնդրի ճանաչողական առաջադրանքների բարդության գնահատման չափանիշների կարևորությունը [3, էջ 44-45]: Մ. Դավթյանի և այլ հեղինակների «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ» աշխատությունում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան դիտարկվում

Է որպես ուսուցման արդիական մոտեցում: Այսօր անհրաժեշտ է սովորողին ցույց տալ նյութի արդիականությունն ու կիրառելիությունը առօրյա կյանքում, որպեսզի նա հասկանա, թե ինչ իմաստ ու նշանակություն ունի նշված առարկայի շրջանակներում ստացած գիտելիքը հասարակական կյանքում [2, էջ 7]: Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է մեթոդաբանորեն հիմնավորել պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի բուհական դասընթացում՝ մեթոդական քայլաշարի միջոցով ընդգծելով թեմայի ուսուցման ժամանակ երևան եկող խնդիրները, դժվարությունները և առաջարկելով դրանց լուծման ուղիներ: Հետազոտության նորույթը: Մանրամասնորեն ներկայացնելով պրոբլեմային ուսուցման առանձնահատկությունները՝ առաջին անգամ վեր են հանվել պրոբլեմային տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները, պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակները հայոց լեզվի բուհական դասընթացում՝ մեթոդական նպատակային ու հաջորդական քայլերի իրացմամբ: Հիմնական նյութի շարադրանքը:

2.2. Պրոբլեմային իրավիճակների ստեղծման եղանակները

Ուսումնական նյութի բովանդակությամբ և սովորողների տարիքային ու հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված՝ առաջարկվում են պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ:

1. Անալոգիայի եղանակ: Այս դեպքում ուսուցանողը հենվում է սովորողների փորձի վրա կամ արդիականացնում է նրանց նախկինում ստացած գիտելիքները նոր խնդիրների լուծման համար: Օրինակ՝ դերանունների տեսակների ուսուցման ժամանակ դասախոսը, հիմնվելով սովորողների՝ խոսքի մասերի մասին ունեցած գիտելիքների վրա, հակադրության և համեմատության մեթոդներով կարող է ընկալելի դարձնել դերանունների արտահայտած տարբեր իմաստները և համապատասխան խոսքի մասերից ունեցած տարբերությունները: Կարող է կիրառել T-աձև աղյուսակի մեթոդը: Այսպես սովորողների համար ակնհայտ է դառնում դերանվան հատկանշային իմաստը դրսևորվում է ընդհանրական ձևով, առանց կոնկրետացման, իսկ ածականի դեպքում առկա է հատկանշային հստակ իմաստ:

2. Մակաձական - վերլուծական - համադրական եղանակ: Սովորողներն ինքնուրույն ուսումնասիրում են երևույթն ու փաստերը և անհրաժեշտ եզրակացություններ կատարում: Օրինակ՝ ուսանողներին հանձնարարվում է տարբեր տեքստերից դուրս բերել հոգնակի թվով կիրառված գոյականներ: Ձևակերպվում է պրոբլեմային խնդիր՝ ըստ օրինակների՝ սահմանել գոյականի թվի քերականական կարգին առնչվող կանոնները: Այնուհետև առաջադրվում է հարց՝ ի՞նչ հոգնակերտ մասնիկ կստանան

մեծատուն, թոնրատուն, դեղատուն, ստորակետ, վերջակետ, ժամկետ, տեսակետ, ատամնաշար, ֆիլմաշար, գրաշար, պատշար, նստացույց, զորացույց, կողմնացույց, ժամացույց, սեպագիր, անձնագիր, պատմագիր, գյուղագիր, նոնահատ, գարեհատ, փայտահատ, դրամահատ, մատնաչափ, հարթաչափ, հանքահոր, հանքափոր բառերը: Ուսանողները Վենի գծապատկերում գրում են նշված բառերը՝ առանձնացնելով հոգնակիակազմության երկու կանոն.

- մեջբերված օրինակները բարդ գոյականներ են, որոնք ունեն միավանկ գոյական վերջնաբաղադրիչ,
- առաջին շարքի գոյականները -եր հոգնակերտ են ստանում, քանի որ վերջնաբաղադրիչ գոյականը պահպանում է իր իմաստը, իսկ երկրորդ շարքի գոյականների վերջնաբաղադրիչը չի պահպանում իր իմաստը, հետևաբար նշված բառերը -ներ հոգնակերտ մասնիկ են ստանում:

3. Ուսումնասիրվող այս կամ այն երևույթի պատճառների որոնում: Պրոբլեմային ուսուցման այս եղանակը կիրառվում է այն դեպքում, երբ խնդրի լուծման կամ նոր գիտելիքների ձեռքբերման համար պահանջվում է գործածել ավելի վաղ ուսումնասիրված սկզբունք կամ օրինաչափություն: Օրինակ՝ ինչո՞ւ ժանգոտել, մրոտել, կեղտոտել, ցեխոտել և նմանօրինակ բայեր բազմապատկական չեն: Եթե սովորողը ի մի բերի ածականի կազմության մասին ունեցած գիտելիքները, կկարողանա նշված պրոբլեմային հարցի պատասխանը հիմնավորել: Նշված բայերը կազմված են -ոտ ածանց ունեցող ածականներից և չունեն իրենց սկզբնաձև անորոշ դերբայը, որին բազմապատկական -ոտ- ածանցը ավելացնելով՝ կարող էին կազմել բազմապատկական բայածևեր, բացի դրանից՝ նշված բառերը չեն արտահայտում նաև այդ բայերին բնորոշ իմաստ:

4. Հակասական փաստի հաղորդում: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նաև սովորողներին հակասական լեզվական իրողությունների, փաստերի հաղորդում: Վերջիններս հստակ օրինակներով պետք է կարողանան հիմնավորել ներկայացվող լեզվական փաստերի հակասականությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առանձնապես ընդգծելով պրոբլեմային ուսուցման բազմակողմանիությունը՝ անհրաժեշտ է ընդգծել հստակ գործառույթներ, որոնք բնորոշ են պրոբլեմային ուսուցմանը: Այս տեխնոլոգիան բովանդակում է պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ, մեթոդներ, որոնք՝ որպես ուսուցման արդյունավետ հնարներ, առավել մատչելի ու նպատակային են դարձնում առարկայական գիտելիքի յուրացումը: Կրթական գործընթացում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների մշակում և ամրապնդում, սովորողների ստեղծագործական մտածողության ու անձնային այլ որակների զարգացում: «Պրոբլեմային ուսուցման» մեթոդները ենթադրում են դասավանդողի կողմից պրոբլեմի առաջադրում, ձևակերպում, լուծում՝ ցույց տալով դրանց լուծման ուղիները: Այս տեխնոլոգիայի էությունն այն է, որ դասավանդողը ցուցադրում է գիտական ճանաչողության, խնդիրների լուծման օրինակներ, արդյունքում ամրապնդվում ու յուրացվում են պրոբլեմային ուսուցման մեթոդներով ձեռք բերված գիտելիքները:

Պրոբլեմային ուսուցման ժամանակ հարցադրման միջոցով ստեղծվում է պրոբլեմային իրավիճակ, երբ հարցի պատասխանը գտնելու համար աշակերտը հարկադրված է գործի դնել ունեցած գիտելիքները, փորձը, մտավոր կարողություններն ու հմտությունները: Պրոբլեմային ուսուցման տեսությունը բավականին մանրամասն մշակված է և մանկավարժական գիտության մի բնագավառն է: Սակայն մինչ օրս էլ պրոբլեմային ուսուցման բնորոշման հարցում մանկավարժները միակարծիք չեն: Որոշ հեղինակներ այն համարում են ուսուցման նոր տիպ, մյուսները դիտում են որպես ուսուցման մեթոդ կամ էլ ուսուցման սկզբունք: Այնուամենայնիվ, մի հարցում նրանք համակարծիք են. պրոբլեմային ուսուցման հիմնական էլեմենտը պրոբլեմային իրավիճակների ստեղծումը և դրա հանգուցալուծումն է: Հոգեբանների կարծիքով՝ մարդը սկսում է մտածել, երբ կարիք է զգում ինչ-որ բան հասկանալու: Սովորողներին այդպիսի կացության մեջ է զցում ուսուցչի կողմից առաջադրված այնպիսի հարցը կամ առաջադրանքը, որի պատասխանը գտնելու ճանապարհին աշակերտը հասկանում է, որ իր ունեցած գիտելիքները բավարար չեն: Այդ պահին էլ հենց կոչվում է պրոբլեմային իրավիճակ: Մարդը սկսում է մտածել, և եթե նա, իրավիճակը վերլուծելով, կարողանում է գիտակցել, թե ինչ հարցում է դժվարությունը, այդ պահից պրոբլեմային իրավիճակը վերածվում է պրոբլեմի: Այնուհետև սովորողը փորձում է հարցի լուծումը գտնել՝ օգտագործելով իր ունեցած գիտելիքները, կարողությունները: Ելնելով ասվածից՝

պետք է ենթադրել, որ ուսուցչի կողմից պրոբլեմի առաջադրումը և լուծումը ենթադրում է ներքոհիշյալ հաջորդական փուլերը.

1. հարցադրում,
2. պրոբլեմային իրավիճակ,
3. պրոբլեմ,
4. պրոբլեմի լուծման մտավոր որոնումներ,
5. պրոբլեմի լուծում:

Պրոբլեմային ուսուցման ճիշտ կիրառման համար անհրաժեշտ է առաջադրել որոշակի և նպատակային հարց: Այն կարող է լինել հեշտ և բարդ՝ կախված այն բանից, թե այն ինչպես է նպաստում պրոբլեմի հանգուցալուծման կատարմանը: Եթե հարցը հեշտ է, նկարագրական բնույթի, ապա այդ դեպքում չի առաջանա պրոբլեմային իրավիճակ, քանի որ աշակերտը առանց մտքի լարման գտնում է հարցի պատասխանը: Հեշտ են համարվում այն հարցերը, որոնց աշակերտը պատասխանում է առանց դժվարության՝ օգտագործելով իր ունեցած գիտելիքները: Պրոբլեմային ուսուցման ընթացքում ստեղծվում և ամրապնդվում են արդեն գոյություն ունեցող միջառարկայական, միջթեմատիկ կապերը, որոնք նպաստում են գիտելիքների համակարգմանը: Պրոբլեմային ուսուցման մեթոդով կազմակերպված աշխատանքը կարող է զբաղեցնել ամբողջ դասաժամը կամ դրա մի մասը: Դա կախված է աշխատանքի ծավալից, հարցի բարդությունից և, իհարկե, ուսուցչի կողմից նախապես պլանավորված լինելուց: Պրոբլեմը աշակերտին կարելի է ներկայացնել ոչ միայն հարցադրումների, այլև հայտորոշիչ թեստերի ձևով, որոնք նպաստում են աշակերտի հիշողության ակտիվացմանն ու ամրապնդմանը, տրամաբանական մտածողության զարգացմանը: Մեր կողմից կատարված աշխատանքները թույլ են տալիս եզրակացնել, որ դասավանդման ընթացքում պրոբլեմային ուսուցման կազմակերպումը ունի բավականին լայն հնարավորություններ աշակերտների մոտ արթնացնելու սեր ուսուցանվող առարկաների նկատմամբ, բարձրացնելու երեխաների հետաքրքրությունը շրջապատող բնության նկատմամբ, զարգացնելու նրանց ճանաչողական ակտիվությունը, բարձրացնելու տրամաբանական մտածողության մակարդակը: Բացի այդ՝ փորձը ցույց է տալիս, որ պրոբլեմային ուսուցման միջոցով ուսումնական նյութը մատուցելիս պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Բազմաթիվ հետազոտություններից հետո Ս.Լ. Ռուբինշտեյնը հրատարակեց «Մտածողություն և դրա եղանակների մասին» աշխատությունը, որի առանցքն է «մտածողությունը սկիզբ է առնում պրոբլեմային իրավիճակում» պոստուլատը: Ասել է, թե մարդը սկսում է մտածել այն ժամանակ, երբ իրեն ինչ-որ բան անհասկանալի է, հակասական է: Այս միտքը հոգեբանների շրջանում

առաջացրեց բուռն և տևական քննարկումներ, որոնք շարունակվում են առ այսօր: «Մի՞թե ոչ պրոբլեմային ուսուցման ժամանակ աշակերտը չի մտածում», - հակադրվում էին որոշ հետազոտողներ: Բանն այն է, որ մտածողության եռթյան մասին հոգեբանական գիտության մեջ կա երկու մոտեցում: Գիտնականների մի ստվար խումբ ընդունում և ուսումնասիրում էր միայն վերարտադրողական մտածողությունը, քանի որ համոզված էր, որ մարդկանց գերիշխող մեծամասնությունը միայն ընդունակ է յուրացնելու պատրաստի գիտելիքը, կիրառելու դրանք: Նրանք չէին կարևորում ստեղծագործական մտածողության ուսումնասիրումը, քանի որ արդյունավետ կամ ստեղծագործական մտածողությունը համարում էին քչերի՝ ընտրյալների բաժինը: Հակառակորդները պնդում էին, որ բոլոր մարդիկ ընդունակ են նաև ստեղծագործական կամ արդյունավետ մտածողության, որի շնորհիվ կարող են հայտնագործել նորը: Ս.Ռուբինշտեյնի փորձարարական հետազոտությունների արդյունքում հաստատվեց, որ ստեղծագործական մտածողությամբ օժտված են բոլոր մարդիկ: Այնպես որ մանկավարժները խնդիր ունեն ուսուցման պրոցեսում դաստիարակել և զարգացնել սովորողների ինքնուրույն, ստեղծագործական մտածողությունը: Առհասարակ մտածողության այս երկու ձևերը հակադրելն անիմաստ է, քանի որ երկուսն էլ կիրառվում են թե ուսուցման գործընթացում, թե կյանքում: Ուսուցման գործընթացում դրանք ունեն իրենց ուրույն խնդիրները. վերարտադրողականը կիրառվում է պատրաստի գիտելիքների յուրացման, նոր իրավիճակներում դրանց կիրառման համար, իսկ ստեղծագործականը՝ նորի հայտնագործման դեպքում: Ժամանակակից արագ փոփոխվող հասարակությունը պահանջում է ազատ մտածելակերպ ունեցող քաղաքացիներ, որոնք միաժամանակ պատասխանատու վերաբերմունք ունեն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլ մարդկանց, հասարակության և բնության հանդեպ: Այդպիսի քաղաքացիներ կրթելու և դաստիարակելու պարտականությունն առաջին հերթին իրականացնում է հանրակրթական դպրոցը, և այդ գործում մեծ է ուսուցչի դերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Տարրական քերականություն, Թիֆլիս, 1910:
2. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004:
3. Չավարյան Է., Կենսաբանության դպրոցական դասընթացում պրոբլեմային ուսուցման կիրառման օրինակներ, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Երևան, 2008, թիվ 3/4:
4. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937:
5. Սևակ Գ., Հայոց լեզվի տեսություն, հ. Ա, Երևան, 1939:
6. Дьюи Дж., Психология и педагогика мышления / Пер. с англ. Н. М. Никольской; Под ред. (и с предисл.) Н. Д. Виноградова, Москва: «Мир», 1915.
7. Матюшкин А. М., Проблемные ситуации в мышлении и обучении, Москва: «Педагогика», 1972.
8. Осмоловская И. М., Организация дифференцированного обучения в современной общеобразовательной школе, М., Воронеж, 1998.
9. Проблемное обучение: прошлое, настоящее, будущее: Коллективная монография: в 3 кн., кн. 1, под ред. Е. В. Ковалевской, Нижневартовск: Изд-во Нижневарт. гуманит. ун-та, 2010.
10. Селевко Г. К., Энциклопедия образовательных технологий. В 2-х т., т. 1, Москва: «Народное образование», 2005.